

**ԳԵՏԱՅԻՆ ԶԿԵՆՈՐՄՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ  
(19—20-րդ դդ.)**

**Ա. Ս. ԳԵՏՐՈՍՅԱՆ**

Տնտեսական կենցաղի ուսումնասիրման ասպարեզում բրոշակի հետաքրքրություն են ներկայացնում գետային ձկնորսության մեջ կիրառված ժողովրդական բազմաթիվ եղանակներն ու հնարքները, որոնց մի զգալի մասը մեր դարի սկզբներին աստիճանաբար պակասեցին, իսկ 1950-ական թթ. սկսած, հանրապետության ոչ հարուստ ջրային պաշարների փոփոխման ու վերակառուցման հետևանքով, դրանք հիմնականում դուրս մղվեցին կենցաղից: Մեր օրերում, ինչպես Սևանի ավազանում, այնպես էլ հանրապետության տարբեր ազգագրական շրջաններում, դեռևս պահպանված գետային ձկնորսության ոչ հարուստ եղանակները մարգա-ժամանցային քնույթ են . կրում: Գետային ձկնորսության ժողովրդական եղանակների ամբողջական նկարագիրը հնարավոր է վերականգնել միայն դաշտային ազգագրական նյութերի շնորհիվ<sup>1</sup>, քանի որ այս մասին եղած գրավոր վկայությունները նույնպես չափազանց անբավարար են:

Հանրապետության մեծ ու փոքր գետերն ու գետակները դեռևս ոչ վաղ անցյալում քավական առատ են եղել տարբեր տեսակի ձկներով, որոնք անձնական օգտագործումից բացի, ունեցել են նաև արդյունաբերական նշանակություն: Սակայն վերջին տասնամյակների ընթացքում հատկապես Սևանի ավազանի գետերում նկատելի պակասել է ձկների տեսականին և քանակությունը, որի պատճառը ջրերի հակասահիտարական վիճակն է, ինչպես նաև՝ տարբեր ցանցերի ու պատնեշների առկայությունը, որոնք արգելում են Սևանա լճից ձկների բարձրանալը դեպի գետերի ակունքները: Մինչդեռ նախկինում ավազանի գետերը անարգել կապի մեջ են եղել Սևանա լճի հետ, և ձվադրության շրջանում **ձկները** լճից անցել են դեպի գետերը: Սակայն գետային ձկնորսությունը մշտական չէր. տարվա մեջ այն կիրառվում էր 2—3 ամիս:

Քննարկվող ժամանակաշրջանում Հայաստանի ավանդական գետային ձկնորսության մեջ կիրառվել են հետևյալ հիմնական եղանակները.

**Նիզակ և եռածածկ**— Նիզակին տալիս են խշտար անունը, իսկ եռածածկն՝ խշտ<sup>2</sup>: Ձկնորսական այս գործիքները, գալով խոր հնությունից և կիրառվելով տարբեր էթնիկ հանրությունների ձկնորսական պրակտիկայում, քավական լավ պահպանվել էին Հայաստանում ընդհուպ մինչև 1950—1960-ական թթ.: Խշտարն ունենում էր մեկ մատ, իսկ խշտը՝ երեք կամ հինգ, որոնք ունեին ձկնորսական կարթին քնորոշ էլուստներ<sup>3</sup>: Երկաթե խշտարը կամ խշտը ամրացնում էին 1,5—2 մ. երկարություն ունեցող փայտի կոթունին և գործածում էին հատկապես գիշերը: Ձկների համար որպես խայծ օգտագործում էին ձեռքի լապտերը կամ շամալ էին անում: Երբ լապտերի կամ առկայծող կրակի լույսին սիրահար ձկները

<sup>1</sup> Դաշտային ազգագրական նյութերը (այսուհետև՝ ԴԱՆ, տետրեր 1—7) գրի են առնվել 1982—1988 թթ. Հայաստանի Հանրապետության մի շարք ազգագրական շրջաններից:

<sup>2</sup> ԴԱՆ, տետրեր 1—7:

<sup>3</sup> Խշտն ու խշտարը պատրաստում էին տեղի դարբնոցներում: Հաճախ խշտի մի ծայրը ուղիղ էր լինում, որը ծակելով ձկան կողերը, մտնում էր մեջը, իսկ մյուս մասները կտրված էին լինում տարբեր կողմեր, որպեսզի հարվածելիս ձուկը մնար այդ կտիկների վրա և նորից չընկներ ջուրը (տե՛ս ԴԱՆ, տետր, 1, Սևան):

<sup>4</sup> Նավթը լցնում էին շորի քրջերի կապոցի կամ ցան (աթարի) վրա, ամրացնում երկաթե շշին ու այրում: Դրան տալիս էին շամալ, մաշխալ, լուպա անունները (տե՛ս ԴԱՆ, տետր 8, Մարտունի):

դուրս էին գալիս ջրի երես, խշտով կամ խշտարով զինված ձկնորսները խփում էին նրանց<sup>5</sup>: Այս գործիքներով հիմնականում որսում էին համեմատաբար խոշոր ձկներ:

**Գետի չանգալ** (այսուհետև՝ կեռիկ) — Ձկնորսական այս գործիքի մասին շատ կարևոր վկայություն ունենք 19-րդ դարի 50-ական թթ.: Ա. Օլերինը ինչեղով Գեղարքունիքում, ակա-  
ճատես է եղել գետի, ինչպես նաև լճի կամ պարանի կեռիկով ձկնորսական եղանակներից և տվել դրանց կառուցվածքն ու աշխատանքի սկզբունքները: «Ձկան որսի այս եղանակի մասին ես չգիտեի, — գրել է նա, — չէի հանդիպել, տեղում առաջին անգամ լսեցի դրա մասին: Կարծում եմ Ռուսաստանում այն անհայտ է, ուստի նկարագրում եմ մանրամաս-  
նորեն»<sup>6</sup>: Գետի կեռիկն ունի շատ պարզ կառուցվածք: Երկաթից պատրաստած կեռիկը թե-  
լով փաթաթում են 1—1,5 մ. երկարությամբ փայտե կոթունի ծայրին կամ ուղղակի կապում ոչ հաստ պարանից և ձուկ են որսում գետերում ու առվակներում: Առափնյա հատվածնե-  
րում նկատելով խոշոր ձկների՝ գետի կեռիկով դիպուկ հարվածում էին: Սակայն այս որ-  
սածնև առավելապես կիրառվում էր գիշերվա ժամերին: Գետի ափին մեծ խարույկ էին  
անում, որի լույսին դեպի ափ էին լողում ձկները: Կեռիկով զինված ձկնորսը խփում էր  
խոշոր ձկներին և ափ նետում: Գետի կեռիկով ձկնորսությունը հատկապես տարածված էր  
Գավառագետ, Մակչքար և Ագրիճա գետերի ջրերում՝ սեպտեմբերի կեսերից դեկտեմբերի  
կեսերը, երբ գեղարքունիքն լողում էր ձվադրության<sup>7</sup>: Այս որսածնը պահանջում էր ճարպ-  
կություն, արագ ու դիպուկ հարված: Դրանով որս էին անում ցանց ու նավակ չունեցող-  
ները: Երկաթե կեռիկը մեծ մասամբ պատրաստում էին տեղում<sup>8</sup>:

Գետի կեռիկը կիրառվել է Հայաստանի տարբեր ազգագրական շրջաններում ընդհուպ  
մինչև 1960-ական թթ.: Առանձին վայրերում պահպանված ձկնորսական այս գործիքի առ-  
կայությունը խոսում է դրա լայն կիրառության մասին: Ազգագրական նյութերի վկայությամբ՝  
կեռիկը փայտին ամրացված փճակում կարծես թողնում է գավազանի տպավորություն, որով  
որսում էին 1—2 կգ. քաշ ունեցող ձկներ<sup>9</sup>: Գետերում ու գետակներում օգտագործելուց  
բացի կեռիկը կիրառվել է նաև լճային ձկնորսության մեջ:

**Չճայած կեռիկով ձկնորսությունը** երկար է կիրառվել, սակայն Գեղարքունիքում այդ  
որսածնը ~~մոլոր~~ է համարվել: Երբ կեռիկով խփում են ձկանը, այն ձայն է հանում, կարծես  
ձուկը ճռոտում է: Ձկնորսական այս եղանակը համեմատում են քարհանքից քար կտրելու  
գործողության հետ: Ինչպես քարը կտրելիս ճռոտում է, այնպես էլ այս որսածնի ժամանակ  
ձուկն է ճռոտում<sup>10</sup>:

Առանձին վայրերում կեռիկն ամրացնում էին 2—3 մ. երկարություն ունեցող փայտի վրա:  
Դա արվում էր այն նպատակով, որ ճոճվող փայտով որսի ժամանակ հնարավոր էր անել  
ազատ ու նկոն շարժումներ: Երբեմն մի փայտին ամրացնում էին երկու կեռիկ և հարվա-  
ծում խոշոր ձկներին: Այս որսածնի ժամանակ հաճախ ոչ մեծ ջրային փոսերի մեջ գցում  
էին մինչև 20 կեռիկ, և ամեն մասնակից որսում էր իր համար: Հայաստանի տարբեր ազ-  
գագրական շրջանների գետային ձկնորսության մեջ օգտագործված կեռիկները խիստ նման  
են եղել: Տարբերությունները մեծ մասամբ վերաբերել են գործիքի ծայրի կեռիկին: Ծատ  
դեպքերում ձկնորսական կարթին բնորոշ ելուստները բացակայել են:

**Ձկնորսական թարփ**<sup>11</sup> — Ձկնորսական այս եղանակը, ինչպես վկայում են ազգագրա-

<sup>5</sup> Ազգագրական նյութերի վկայությամբ 1930-ական թթ. Վարդենիսում ձկնորս Արամը  
իր 6—7 տարեկան տղային նստեցնում էր ուսին, ձեռքը տալիս վառվող շամալը, իսկ ինքը  
ջրի մեջ տած, խշտը ձեռքին՝ սպասում էր ձկների երևալուն: Ձկներին խշտով խփելով՝  
ափ էր նետում (տե՛ս ՂԱՆ, տետր 2, Կամո):

<sup>6</sup> А. Оверин, Нескольцо слов о ловле и сушке рыб на Гокчайском озере, «Кав-  
казский календарь», на 1858, Тифлис, 1857, стр. 4—5.

<sup>7</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության պատմության պետական կենտրոնական արխիվ  
(այսուհետև՝ ՊՊԿԱ), ֆ. 133, ց. 1, գ. 1966, մ. 2-րդ, թ. 303—304:

<sup>8</sup> Տե՛ս А. Кузьмин, Сельскохозяйственные очерки Новобаязетского уезда, «Сбор-  
ник Кавказского общества сельского хозяйства», вып. II, Тифлис, 1879, էջ 113:

<sup>9</sup> ՂԱՆ, տետր 1, Սևան: Գեղարքունիքում գետի կեռիկը նմանեցնում են բանձրի կոշ-  
վող երկրագործական աշխատանքային գործիքին:

<sup>10</sup> ՂԱՆ, տետր 3, Մարտունի:

<sup>11</sup> Թարփ կամ թարբ բառը բնու է ձուկ որսալու համար  
ջրի առաջ դրված կողով, հատկապես երկու ունկով, վանդակաձև հյուսվածք, վանդակա-  
պատ (տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 2, Երևան, 1979, էջ 162):  
Արխիվային նյութերում այն հայտնի է դամբ անունով (տե՛ս ՊՊԿԱ, ֆ. 133, ց. 1, գ. 1732,  
մ. 1, թ. 53): Թարփը հայտնի է նաև կողով կամ սարաթ անունով, իսկ Արցախում՝ ճվարսև:

կան նյութերը, ունեցել է համահայկական լայն տարածում, որի մասին հիշատակվում է **Ճակ** հայ միջնադարյան աղբյուրներում: Թարփի երկարությունը հասնում է 1,5—2 մ., դա կըրկ-նակի կողով է, բաղկացած մեծ ու փոքր թարփերից<sup>12</sup>: Ջկնորսական թարփը գործում են ուռենու ճյուղերից, որին տալիս են լալկան ուռենի աճունը: Ուռենու հաստ շիվերը շրջա-նաձև խրում էին գետնի մեջ, որոնք իրար էին ազուցվում ավելի բարակ ճյուղերով: Թարփի մեծ ու փոքր կողովները գործում էին առանձին-առանձին, որից հետո փոքր կողովը մշտ-նում էին մեծ կողովի մեջ և ուռենու բարակ ճյուղերով գործելով՝ ամրացնում իրար: Թար-փը կոճանձ է, ունի լայն բերան, որը գնալով նեղանում է, իսկ երկրորդ կողովի ծայրը կապում են թելով, պարանով կամ ուռենու շիվերով: 1950-ական թթ. ուռենու ճյուղերից գործած հիմքի փոխարեն լայն կիրառություն ստացավ մետաղալարը<sup>13</sup>: 50 սմ. տրամագծով մետաղալարի հիմքի վրա հենք տալով գործում էին փոքր կողովը: Թարփի ներքևի մասը լինում էր ուղղանկյուն, որը գնալով կլորանում էր: Որպեսզի ուռենու շիվերը հնարավոր լիներ գործել մետաղալարի հիմքին, շիվերի հաստ գլուխները դաճակով կիսով չափ տա-շում էին և հարթեցնում:

Ուռենուց հյուսած թարփի բերանի մասում օգտագործվող մետաղալարից բացի, ներ-սում ևս, 2—3 տեղով, դրվում էին մետաղալարի օղակներ, որպեսզի թարփը պահպաներ իր դիրքը և չծովեր: Ավելի վաղ այս օղակները ևս արվում էին ուռենու ճյուղերից: Ընդ-հանդրապես, մինչև թարփում մետաղալարի օգտագործումը, որը ձկնորսական գործիքը պատ-բաստում էին ուռենու շիվերից, ընդհուպ մինչև թարփի պոչին կապվող ոչ հաստ շիվը: Թարփի երկարությամբ, որը մակերեսի շրջը, ութ տեղով գործում էին օղակներ, որոնց միջև թողնվում էր 10—12 սմ. տարածություն: Գնալով թարփը նեղանում էր և ավարտվում բարակ պոչով: Միջին մեծությամբ թարփերը ուռենում են հինգ ամրացնող գրտիներ, իսկ ավելի մեծերը՝ մինչև ութ և ավելի: Ամբողջ թարփն ունի համաչափ, կամարակապ տեսք: Թարփի օղակ-գրտիները պատրաստում են ավելի հաստ ճյուղերից, որպեսզի թարփը ա-մուր լինի և ապահով տեղափոխվի տեղից տեղ<sup>14</sup>:

**Թարփը նման է շուռ տված թանաքամանի**<sup>15</sup> էրր ձուկը փոքր կողովից ներս է ընկ-նում, այլևս դուրս գալ չի կարող: Ինչպես կառուցվածքային տեսակետից, այնպես էլ օգ-տագործման եղանակներով Հայաստանի տարբեր ազգագրական շրջաններում կիրառված թարփերում նկատվում են զգալի առանձնահատկություններ, որոնք արգասիք էին տեղի պաշ-մանների և գոտիականության: 19-րդ դ. երկրորդ կեսերի գրավոր նյութերի վկայությամբ, թարփերը դնում էին գետում, ջրի հոսանքի հակառակ ուղղությամբ: Եվ որպեսզի ջուրը չբջեր, թարփի վրա ու կողքերին քարեր էին շարում կամ կապում: Ջկների առատության շնորհիվ այն արագ լցվում էր, որից հետո թարփը ջրից հանում էին ափ, քանդում գոր-ծիք պոչի կապը և դատարկում ներսում եղած ձկները<sup>16</sup>:

Թարփի կիրառման բազմազան հնարքները խստորեն կապված են ձկների դեպի իրենց ծննդավայրը գնալու և այնտեղ ձկադրելու հանգամանքի լավ իմացության հետ<sup>17</sup>: Երբ ձուկն այդ թանկան գաղթի ժամանակ փորձում է անցնել ոչ մեծ քարձրություն ունեցող պատնեշ-ները, չկարողանալով հաղթահարել, ընկնում էր սվյալ հատվածում տեղադրված թարփի մեջ: Իսկ էրր ձկադրելուց հետո ձուկն իջնում էր դեպի գետի ցածրադիր վայրերը կամ լիճը,

<sup>12</sup> ՊՊԿԱ, ֆ. 188, ց. 1, գ. 1782, մ. 1, թ. 53—54: Թարփի փոքր կողովին Գեղարքու-նիքում տալիս են **խազիճե աճունը** (ԴԱՆ, տետր 3, Մարտունի):

<sup>13</sup> **Մետաղալարից** գործած թարփ-ցանցերն ավելի դիմացկուն էին և օգտագործման համար առավել նպատակահարմար:

<sup>14</sup> **Մեկ** թարփ գործելու համար (առանց գրտիների) անհրաժեշտ է ուռենու 170 շիվ, իսկ ընդամենը՝ 210—220 հատ: Մեկ օրվա ընթացքում գործում էին մեկ թարփ: Թարփերը դնում էին ձկների կորեկ թափելու ժամանակ, որոնց մեջ մինչև 25—30 կգ. ձուկ էր լցվում (ԴԱՆ, տետր 3, Մարտունի):

<sup>15</sup> Ժողովրդական այս բնորոշումը լիարժեք կերպով արտահայտում է ինչպես թարփի արտաքին կառուցվածքը, այնպես էլ օգտագործման սկզբունքները:

<sup>16</sup> ՊՊԿԱ, ֆ. 138, ց. 1, գ. 1782, մ. 1, թ. 53—54, հմմտ. Ս. Кузьмин, Զվ. աշխ., էջ 118:

<sup>17</sup> Գեղարքունիքում ասում էին, որ եթե կողակը ծովից դուրս եկավ, պետք է այնքան գնա գետով, մինչև գլուխը զարգա վերջին փլին: Կորեկը թափելուց հետո նորից պետք է գա լիճը: ձկների բեղմնավորմանը Գեղարքունիքում տալիս են **եռ աճունը**. եթե ձեռքով բռնես, ձուկը չի գա (տե՛ս ԴԱՆ, տետրեր 1—4):

Մետահատն ձկներն աշխատում են ձկադրել այնտեղ, որտեղ իրենք են ծնվել, թելուզ և ծնվելուց հետո երկար ժամանակ լքած լիճնե՛ն ծննդավայրը: Դա այնքան բնորոշ է ձրկ-ների, որ գիտական գրականության մեջ այն կոչվում է «հայրենիքի կամ ծննդավայրի բնագոյ» (տե՛ս Մ. Դադիկյան, Հայաստանի ձկները, Երևան, 1971, էջ 85):

ապա ոչ բարձր ջրվեժներից ընկնելով, մտնում էր թարփի մեջ և այլևս դուրս գալ չէր կարողանում: Ջրի անկման տեղերում թարփը դնում էին գիշերը և հանում առավոտյան<sup>18</sup>: Դրված թարփերում ձկների համար որպես խայծ օգտագործել են հացի փշրանքները և այն ամենը, ինչը կարող էր գրավել նրանց: Ջուկը որպեսզի հասներ խայծին, պետք է անցներ փոքր կողովի մեղ անցքից, որից հետո դուրս գալիս անհնարին էր: 1880-ական թթ. թարփերի կիրառումը գետային ձկնորսության մեջ խիստ գերակշռող է դառնում: Թարփով ձկնորսությունը, բոլոր նախկինում մեծ մասամբ ուներ ընտանիքի պահանջները բավարարելու իմաստ, ձեռք է բերում արդյունաբերական նշանակություն:

**Ձկնորսական բանդ**<sup>19</sup>— Այն կառուցում էին ձկնառատ գետերի վրա, որոնց մի մասն այսօր ևս օգտագործվում է: Երբ լճից ձկները ձվադրության համար շարժվում էին գետի հոսանքին ընդառաջ, ապա նրանց որսում էին ցանցերի միջոցով: Բանդն ունի բավական պարզ ու հնարամիտ կառուցվածք և գրեթե ընդհանուր է տարբեր ազգագրական շրջանների համար: Բանդը կառուցելու նպատակով գետի լայնքով ամեն երկու մետրը մեկ խրվում էին երկու ցից (սվայ)՝ առջևից և հետևից<sup>20</sup>: Այդ ցցերն իրար են ամրացվում տախտակներով, հետևի մասում խփված ցիցը ծառայում է նաև որպես հենակ: Այնուհետև խրփված ցցերի վրա, գետի ողջ լայնքով խփում են ամրացնող տախտակներ: Դրա շերտիվ ստեղծվում է **ճանապարհ**, որը ծառայում է գնալ-գալու, գետի մի ափից մյուսն անցնելու և ընդհանրապես թարփով ձկնորսությունն իրագործելու նպատակին: Ծանցերի միջև եղած հատվածներում դնում էին փայտե կամ երկաթե ճաղեր, որոնք ունեն երկու մետր երկարություն և մեկ մետր բարձրություն<sup>21</sup>: Որպեսզի ճաղը դիմանար ջրի հոսքին, այն շուրջ 30 սմ.-ով մտցնում էին գետի մեջ գցած քարերի արանքը, իսկ վերևի մասը կապում այուներից: Երկաթե ճաղ-շրջանակների միջև ընկած հատվածում թողնվում էր 50—80 սմ. տարածք՝ թարփը տեղադրելու համար: Թարփի բերանն ուղղվում էր դեպի լիճը, գետի հոսանքին հակառակ: Լճից գետի հոսանքով ձկները բարձրանալով հասնում էին քանդին և չկարողանալով անցնել երկաթե ճաղերի արանքից, որոնցով փակված էր լինում ողջ գետի հունը, ստիպված մտնում էին թարփերի մեջ: Երբ համոզվում էին, որ թարփը լցված է ձկներով<sup>22</sup>, ջրից հանում էին այն, ձուկը դատարկում և թարփը նորից ամրացնում ճաղերի կտրվածքում:

Բանդով տարվա մեջ ձուկ էին որսում երկու անգամ. գարնանը (մայիսի 20-ից հուլիսի 15-ը) և աշնանը (հոկտեմբերի 15-ից դեկտեմբերի 31-ը): Այսինքն այս սարքով որս էին անում ձկների ձվադրության շրջանում: Որսած ձկներին անմիջապես կտում էին և ձկնկիթը լցնում գետը: Այս տեսակետից բանդով ձկնորսությունը բացասաբար չի անդրադառնում ձկների աճին ու բազմացմանը: Բանդով ձկնորսությունը հիմնականում կատարվում էր գիշերը, քանի որ ձկնկիթը օրվա շոգ ժամերին չէր դիմանում: Այս որսաձևի ժամանակ ևս

<sup>18</sup> Ջրի անկման վայրերում թարփը պետք է այնպես հուսալի ամրացվեր, որ դիմանար ջրի հոսքին: Թարփը գետում կապում էին երեք պարանների օգնությամբ, որոնց մի ծայրն ամրացնում էին թարփի տարբեր կողմերից, իսկ մյուսը՝ գետում եղած խոշոր քարերից (ԴԱՆ, տետր 1, Սևան):

<sup>19</sup> Բանդ քաղը բառարաններում բացատրվել է որպես երաժշտական իմաստ արտահայտող բառ, որի մի տարբերակն է բանդախառն՝ «բանդերը խառնված» (տե՛ս Հր. Աճառյան, Աշվ. աշխ., հ. 1, Երևան, 1971, էջ 406): Հր. Աճառյանը քաղը բխեցնում է պարսկերեն Band բառից (կապ, գոտի), որը Արցախում օգտագործվում է Bänd ձևով:

Սակայն այս ստուգաբանության մեջ չի նշվում ձկնորսության մեջ լայն տարածում գրտած կարգը: Այն հանգամանքը, որ այսօր ևս գետային ձկնորսության մեջ կիրառվում է բանդ կառույցը, խոսում է բառի ավելի լայն իմաստ ունենալու օգտին: Բառի կապ կամ խառնված իմաստը հատկորեն ընդգծում է բանդ կառույցով ձկնորսություն անելու հանգամանքը: Իսկապես, բանդը խառնում կամ կապում է ձկներին, շփոթեցնում նրանց: Կասկածից վեր է բանդ բառի նախնական իմաստի ընդլայնումը և դրա տարածումը նաև գետային ձկնորսության ժողովրդական մի ինքնատիպ եղանակի վրա, որը պայմանավորված էր թարփերի կիրառմամբ:

<sup>20</sup> Գետի մեջ գերանն ամրացնում էին բաբ կոչվող փայտե ծանրոցով: Դա կոճղի բավական ծանր կտոր է, որի կողերին հարմարեցված են փայտե բռնակներ: Երկու մարդ բռնակելով այդ բռնակներից, ուժեղ հարվածում էին գետում խփվող ցցի գլխին:

<sup>21</sup> Սկսած 1950-ական թթ. փայտե ճաղերը մեծ մասամբ իրենց տեղը զիջեցին երկաթե ճաղերին:

<sup>22</sup> Թարփի վերևի մասում երկու օղակներից ամրացնում էին Խոնեհու ճյրղերից կամ ամուր պարանից պատրաստած բռնակը, որը ծառայում էր տեղից տեղ տեղափոխելուն: Որպեսզի համոզվեին թարփը հանելու ժամանակն է, թե ոչ, բռնակից բռնած կիսով չափ բարձրացնում էին և ստուգում թարփի պարունակությունը:

օգտվում էին շամալից, Ռրսում էին առավելապես կողակ, իսկ աշնանը՝ բախտակ, քանի որ ջրերի սառնալթյան շրջանում կողակը գետի վերին հոսանքները չի բարձրանում<sup>23</sup>: Չնայած դրան, բանդով ձկնորսության ժամանակ ավելի շատ կողակ էին որսում, քան բախտակ: Մեկ օրվա ընթացքում Մասրիկ (Գիլի) գետի վրա կառուցված բանդով որսացել են մոտ երկու տոննա կողակ: Բացի բավական արտադրողական լինելուց, բանդով ձկնորսությունը նպաստավոր էր նաև արհեստական ձկնաբուծության զարգացման տեսանկյունից: Երբ ավարտվում էր ձկնորսության շրջանը, բանդում էին ամբողջ կառույցը, ջրից դուրս բերում և պահում հաջորդ տարվա համար<sup>24</sup>:

**Գետի ճյուղը կտրել**— Այս որսաձևը Հայաստանի որոշ ազգագրական շրջաններում հայտնի է նաև այս կտրել, բանդ և այլ անուններով: Որսաձևն ունեցել է համահայկական լայն տարածում ու ճանաչում: Ազգագրական ճյուղերի վկայությամբ, այս որսաձևի ժամանակ կիրառվել են բազմաթիվ հնարքներ ու եղանակներ, որոնցից առավել բնորոշ են եղել հետևյալները.

Քարերով պատ էին շարում գետի մի ճյուղի ողջ հատվածի լայնությամբ, այնուհետև քարերի արանքները փակում էին գուղձերով: Երբ պատնեշը պատրաստ էր, և ձկներն այլևս չէին կարող անցնել շարվածքից, փակում կամ փոխում էին դեպի այդ հատվածը եկող ջրի հոսքը: Փոսի հատվածում մնացած ջուրը դատարկում էին դուլներով, որից հետո ձեռքով հանում էին հատակում եղած ձկները: Նկարագրելով այս որսաձևը, Ն. Շոպենը գրել է, թե միշտ չէր, որ հասցնում էին հատակում մնացած ամբողջ ձկները հավաքել: Ըստ հաճախ գետի ճյուղի կտրված հատվածում մնում էր ձկների մի մասը, որը կեղտոտում էր շրջապատը և տարածում զարշահոտություն<sup>25</sup>:

Ըստ հաճախ փակում էին ոչ թե գետի մի ճյուղը, այլ ողջ հունը, մի ափից մյուսը կառուցում խուլ պատ կամ ձկնորսական փակուց: Այն ունենում էր մինչև 1,5 մ. բարձրություն և փակում լճից դեպի գետը գնացող ձկների ճանապարհը: Դրանց առկայությունը հատկապես նկատելի էր Գավառագետ և Ծալքար գետերի վրա: Ձկնորսական փակուցների տարբեր հատվածներում թողնում էին որոշ բացվածքներ, որտեղ կապում էին ուռնառ ճյուղերից հյուսված որսացանցեր՝ թարփեր, որոնց երկարությունը հասնում էր 2—2,5 մ.: Ձկները պատից անցնել չէին կարող, լողալով ընկնում էին դրված որսացանցերի մեջ<sup>26</sup>:

Ձկնորսական փակուցները նկատելի վնաս էին հասցնում գետային ձկնորսությանը, սակայն մեծ օգուտ էին բերում կապալառուներին: Կապալով վերցված ձկնորսական տեղամասի եկամտի 50—75 %-ը ստացվում էր ձկնորսական փակուցներից<sup>27</sup>: 1890-ական թթ. որոշակի հետևողականությամբ առաջ է քաշվում նման պատնեշ-փակուցների վերացման անհրաժեշտությունը: Ընդհանուր առմամբ այս որսաձևը չէր նպաստում ձկնորսության զարգացմանը, խոշոր ձկների հետ մեկտեղ ոչնչանում էին նաև փոքրերը: Դրանով հիմնականում որսում էին կողակ: Գրավոր ճյուղերի վկայությամբ 1920-ական թթ. Ագրիճա գետի Ներքին Գետաշեն գյուղի հատվածում գործում էին այդ սկզբունքով աշխատող ութ որսացանցեր, որոնցով տարեկան որսում էին 400—500 փոթ ձուկ:

Երբեմն գետում իրարից որոշ հեռավորությամբ փայտե ոչ մեծ ցցեր էին խփում, որից հետո փոում պալատկան: Ցցերը ծառայում էին որպես հենարան: Պալատկայի վերին եզրերը կապում էին ցցերից, իսկ ներքևի մասի վրա քարեր շարում, որպեսզի ձկները տակից չանցնեին: Պատնեշավորման այս եղանակը գալիս է փոխարինելու գետում կառուցվող խուլ պատին և համարվում է դրա առավել պարզունակ եղանակներից մեկը: Գետի կրտած ճյուղի հատվածում ամրացնում էին ձկնորսական ցանց՝ տեճո<sup>28</sup>: Երբ փոխում էին

<sup>23</sup> Ձուկը դուրս է գալիս ջրի երես այն ժամանակ, երբ արևը թույլ է լինում կամ մեղմ անձրև է գալիս (ՊԱՆ, տետր 1, Սևան):

<sup>24</sup> ՊԱՆ, տետրեր 1—4, Գեղարքունիք:

<sup>25</sup> Տե՛ս *И. Шопен, Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи*, СПб. 1852, 4, 806:

<sup>26</sup> Տե՛ս ՊՊԱՍ, ֆ. 190, ց. 1, գ. 128, թ. 50: Դաշտային ճյուղերի վկայությամբ, տարբեր տեսակի ու չափերի որսացանցերի հետ մեկտեղ այս որսաձևի ժամանակ օգտագործել են նաև փայտե արկղեր, որոնք դնում էին պատնեշում թողնված կտրվածքի տակ: Ձուկը լողում էր դեպի այդ կտրվածքը, ընկնում արկղի մեջ և դուրս գալ չէր կարողանում: Փայտե արկղերի օգտագործումն այս որսաձևի ժամանակ ավելի պարզունակ միջոց էր:

<sup>27</sup> ՊՊԱՍ, ֆ. 190, ց. 1, գ. 49, թ. 245—247:

<sup>28</sup> Տեճույիմ տարբեր վայրերում տալիս են տըճո, տըճգ, տանգ և այլ անուններ: Չըճայած բառարաններում այս բառի բացատրությունը չկա, սակայն այն այսօր ևս օգտա-

ջրի հունը, ձկներն անցնում էին տեճգոյի մեջ կամ մնում պալատկայով փակված ջրի հատվածում<sup>29</sup>:

Այս որսաձևի առավել արդյունավետ եղանակը կիրառվել է Ագրիճա գետում, որի լայնությունը առանձին հատվածներում հասնում էր 24 մ.: Գետը բաժանում են երկու ճյուղի՝ յուրաքանչյուրը 12 մ. կտրվածքով, առջևում դնելով երկաթե ճաղեր: Վերջիններիս բացակայության դեպքում գետի մեջ ամեն երկու մետրի վրա խփում էին ցցեր, որոնց ամրացնում էին փոքրիկ տախտակներ (լիժաներ), իսկ տախտակների վրա՝ գերաններ: Գերանների միջև նորից խփում էին տախտակներ: Դրանից հետո ճաղերը մեխում էին գերաններից, որպեսզի ամրանային և չշարժվեին: Այս եղանակով ստեղծված ինքնատիպ կառույցը նմանվում էր կամրջի: Երբ կամուրջն արդեն պատրաստ էր, ջուրը բաժանում էին երկու մասի: Գետի մեջտեղում ստեղծվում էր ճանապարհ, որի երկու կողմերից հոսում էր երկու մասի բաժանված գետը: Գետի՝ լիճը թափվելու տեղից 20 մ. վերև կառուցում էին նոր կամուրջ, որն ուներ 12 մ. լայնություն (այսինքն 24 մ. լայնք ունեցող գետի կեսը): Այն ուներ նախկին կամրջի կառուցվածքը: Գետի հունը փակող փայտե ճաղերի միջև թողնվում էր 40 սմ. բացվածք, որպեսզի դրվեր տեճգոն: Դա դնում էին այն ժամանակ, երբ ջուրը շուտ էին տալիս դեպի ցամաք: Որսի ընկանակ գետի մի հատվածը փակում էին, իսկ մյուսով հոսում էր ջուրը: Տեճգոյի մեջ ընկած ձկներին կրում էին, ձկնկիթը լցնում ջրավազանի մեջ, իսկ ձկներին նորից բաց էին թողնում լիճը: Տեճգոյով ձուկ էին որսում ձրկների ձվադրության շրջանում (մայիս-հուլիս ամիսներին): Եթե սույն եղանակը հարմար էր ձկնկիթի ստացման համար, ապա, ընդհանուր առմամբ, չէր նպաստում ձկնորսության զարգացմանը<sup>30</sup>:

Այս որսաձևի ժամանակ փոքր տեճգոյի փոխարեն հաճախ օգտագործում էին մեծ տեճգո: Դրա բերանի շրջագծի երկարությունը լինում էր 16 մ., իսկ ծայած վիճակում՝ 8 մ.: Մեծ տեճգոն ունենում էր 14 մ. երկարություն, իսկ ցանցի աչքերի լայնությունը լինում էր 32 սմ.: Այս դեպքում կամուրջը մնում էր որպես պարտադիր կառույց: Ձուկը հասնում էր կամուրջ-արգելակին և ընկնում տեճգոյի մեջ: Տեճգոն դրվում էր գետի վերջավորությունից մեկ-երկու մետրի վրա, փաստորեն գետը վերջանալու տեղում պարտադիր կերպով բերանը դեպի կամրջի կողմը<sup>31</sup>: Չորս մարդ կանգնում էին տեճգոյի բերանի ներքևի երկաթե շղթայի վրա և ձեռքով բարձրացնում էին վերևի մասը, իսկ երկուսը մտնում էին ջուրը, խառնում այն ու աղմուկ-աղաղակով ձկներին քշում դեպի տեճգոն<sup>32</sup>: Ձկնորսական այս եղանակին երբեմն տալիս էին մաշալ անունը, որովհետև այս որսաձևը մեծ մասամբ արվում էր գիշերը՝ արհեստական լույսի առկայության պայմաններում:

**Ավաղ<sup>33</sup>**— Ինչպես ժողովրդական ձկնորսության շատ եղանակներ, ավաղով ձկնորսությունը ևս մեծ մասամբ արվում էր գյուղատնտեսական աշխատանքների ավարտից հետո, որպես օժանդակ զբաղվումը: Ավաղով ձկնորսությունը բարդ ու աշխատատար չէր, սակայն բավական արդյունավետ էր: Հավանաբար այս հանգամանքով պետք է բացատրել որսաձևի տարածման բավական լայն ընդգրկումները: Սեպտեմբեր կամ հոկտեմբեր ամիս-

գործվում է Գեղարքունիքի բնակչության բանավոր խոսքում: Ազգագրական նյութերի վկայությամբ գործիքին տրվող այդ անուններն ընդգծում են այս որսաձևի առավել արտադրողական լինելը, շեշտելով դրա հզորությունը մյուս գործիքների նկատմամբ: Առանձին դեպքերում տեճգոյի մեջ մինչև մեկ տոննա ձուկ էր լցվում: Տեճգոն փաստորեն ունենու ճյուղերից հյուսած ձկնորսական թարփի առավել կատարելագործված տիպն էր: Ինչպես թարփով, այնպես էլ տեճգով արվող ձկնորսության սկզբունքները նույնն էին, միայն վերջինս անհամեմատ արտադրողական էր: Տեճգով ձկնորսությունը կիրառվում էր Գեղարքունիքի գետային ձկնորսության մեջ դեռևս ոչ վաղ անցյալում (ԴԱՄ, տետրեր 1—4):

<sup>29</sup> Տեճգո B. Петров, Рыболовство на Севастском озере, «Экономическая вестник Армени», Ереван, 1924, № 1, էջ 11:

<sup>30</sup> ԴԱՄ, տետր 3, Մարտունի:

<sup>31</sup> Տեճգոյի բերանն ավարտվում էր ամուր շրիղով, որի ներքևի մասում ամրացվում էր երկաթե շղթան: Այն բռնում էր թոռի բերանի ուղիղ կեսը: Թոռի շրիղի թելերը մտցնում էին երկաթե շղթայի օղակների մեջ և կապում: Տեճգով ձկնորսություն անելիս երկաթե շղթան պարտադիր էր, քանի որ դրա շնորհիվ տեճգոյի բերանի մասը ծանրանում էր, նըստում գետի հատակին, որի հետևանքով ձկները շղթայի տակից անցնել չէին կարող:

<sup>32</sup> Ազգագրական նյութերի վկայությամբ, ջրի մեջ մտած մարդիկ այնպես էին ջուրը խառնում և ձկներին քշում տեճգոյի բերանը, ինչպես ոչխարի հոսոն են քշում դեպի աղը (ԴԱՄ, տետր 1, Սևան):

<sup>33</sup> Գեղարքունիքում այս որսաձևին տալիս են մաղազա կամ ծվար անունը: Փոքր փոսերում, քարերի արանքներում ձկներն այնպես են հավաքվում իրար գլխի, որ ստեղծում են ծվարի տպավորություն (ԴԱՄ, տետր 1, Սևան):

Յերին լավ մաքրում էին գետերում եղած փոսերը կամ փորում ճորերը, որից հետո գետա-  
չարերից ուղղաճկյուն հատակագծով շարում էին 1—1,5 մ. բարձրությամբ չորս պատեր:  
Առանձին ազգագրական շրջաններում ծածկում էին նաև այդ կառույցի վերևի մասը՝ տա-  
նիքը, որը թողնում էր գետնափոր տան տպավորություն: Կառույցի կարճ պատերի կող-  
մից, գետի հոսանքի հակառակ ուղղությամբ, թողնում էին երկու բավական մեծ անցքեր<sup>34</sup>:  
Դրանք գետի շրից մի քիչ ցածր էին անում, որպեսզի ջրի պակասություն դեպքում ևս ջու-  
րը հոսեր այդ անցքերով: Երբ կառույցը պատրաստ էր, ներսում գցում էին ոչ մեծ գետային  
քարեր, որպեսզի ձկները մտնեին դրանց արանքները: Չմտանը նախ հանում էին տանիքի  
սակերը, կտրում ավաղում եղած սառույցը, որից հետո մտնում էին փոսը և հանում գե-  
տաքարերը: Այնուհետև ավաղի մի անցքը փակում էին, իսկ մյուսի տակ դնում ցանց կամ  
ուռենու ճյուղերից հյուսված զամբյուղ: Փոսի մեջ մնացած ջուրը խառնում էին քահով, ձրկ-  
ներն ավաղից ընկնում էին ցանցի կամ զամբյուղի մեջ: Գրավոր նյութերի վկայությամբ  
ավաղով ձկնորսություն անելիս երբեմն միանգամից հանում էին 80—50 փութ ձուկ:

Աշմանն ու մտանը, ջրի ջերմաստիճանի խիստ անկման շրջանում, մտան կառույցները,  
մանավանդ եթե դրանք փակված էին քարե սալերով, բավական տաք էին լինում և դեպի  
իրենց ձգում ձկներին: Ուստի պատահական չէ, որ այս որսաձևի ժամանակ միշտ էլ առատ  
ձուկ էր լինում: Ավաղով ձկնորսությունն արվում էր ինչպես կոլեկտիվ, որի դեպքում ձուկը  
հավասար բաժանում էին մասնակիցների միջև, այնպես էլ առանձին-առանձին:

**Ջուլա**— Գրավոր նյութերում զույայով արվող ձկնորսության մասին հիշատակություն  
չունենք: Այդ պատճառով այս յուրօրինակ որսաձևն ու ձկնորսական գործիքը մինչև այժմ  
հիմնականում անծանոթ է մնացել: Ջուլայով ձկնորսության մասին միակ աղբյուրը մնում է  
Կամոյի շրջանի Նորադուզ գյուղից հավաքած դաշտային ազգագրական նյութերը: Այս որ-  
սաձևը պետք է համարել ուշ շրջանի երևույթ, հավանաբար մեր դարի սկզբներից ոչ վաղ,  
որը պահպանվել էր մինչև 1960-ական թթ.: Ըստ որում, բարձր արտադրողականության  
շնորհիվ, այն համարվել է պետական ձկնորսական եղանակ: Նկատենք, որ զուլայի կիրա-  
ռությունը պայմանավորված էր Գավառագետում ձկների զգալի առատությամբ: 1960-ական  
թթ. Գավառագետում ձկների կտրուկ պակասելու: հետևանքով այս որսաձևը դուրս եկավ  
կիրառությունից:

Ջուլան ունենում էր 3—4 մ. երկարությամբ մետաղալարե ոչ հաստ, սակայն ամուր  
կոթուն, 3—4 կետիկ-չանգակները ամրացնում էին մոտ մեկ մետր երկարություն ունեցող  
ամուր մետաղալարին, իսկ վերջինս՝ կոթունին: Որպեսզի զուլան դյուրաշարժ լիներ և ջրից  
հեշտ դուրս քաշվեր, մետաղալարե կոթունի վերջին հատվածում կապում էին փայտի մի  
կտոր: Ջուլայով ձկնորսություն անելիս ձկնորսը կանգնում էր փսից կամ մտնում գետը և  
զուլան գցում ջրի մեջ: Գցելուց հետո գործիքն անմիջապես քաշում էր դեպի ափը, ձուկն  
ընկնելով կետիկների մեջ՝ հանվում էր ցամաք: Ջուլայով ձկնորսություն անելիս կարծես  
ջուրը փոցկում էին: 1946 թ. Գավառագետից երեք ժամում զուլայով հանել են մոտ 700 ձուկ,  
շուրջ 400 կգ.<sup>35</sup>: Ջուլան պատրաստել են Նորադուզի դարբնոցում: Այն իր կառուցվածքով,  
աշխատանքի սկզբունքով համարվում է ձկնորսական կետիկների, չանգի և կարթի առավել  
պարզունակ ձևերի միակցում, որի շնորհիվ բարդացել է այդ գործիքը և դարձել ավելի  
արտադրողական: Գետային ձկնորսության հնարավոր զարգացման պարագայում, ինչպես  
նաև փոքր լճակային արհեստական ձկնորսության մեջ, զուլան կարող է ունենալ կիրառա-  
կան նշանակություն:

**Ջրաղացի թարփ կամ քարե ծուղակ**<sup>36</sup>— Ազգագրական նյութերի վկայությամբ թարփ  
անունը ճյուղերից հյուսած կրկնակի կողովներից բացի տրվել է նաև արագահոս որոշ գե-  
տերի առանձին հատվածներում կառուցած և ջրաղացների հետ նկատելիորեն կապված ու  
դրանցով պայմանավորված ոչ մեծ կառույցին: Սակայն թարփ բառը ինչպես գրավոր նյու-

<sup>34</sup> Սևանի շրջանի Դոմաշեն գյուղում այդ կառույցին տալիս են ձկան օջախ անունը,  
իսկ Աշտարակում՝ ձկան թալակ, որը խիստ բնութագրական է: Աշտարակի և Իջևանի շրջ-  
աններում այն հայտնի է նաև օջախ անունով, որն ըստ դաշտային նյութերի նշանակում է  
օջախ (տե՛ս ԴԱՆ, տեսրեր, 5, 7): Սևանի ավազանում ձկան օջախը կառուցում էին բա-  
վական հմտորեն, որի շնորհիվ կողմնակի մարդը չէր կարող նկատել ավաղը, ուստի այն  
մնում էր անձեռնամխելի: Ավաղի ներսում դրված քարերի և պատերի միջև թողնում էին  
որոշ տարածություն, որպեսզի ձկները կարողանալին անցնել ավաղի մի ծայրից մյուսը:  
Կառույցի միակ մուտքը թողնվում էր ջրի հոսանքի հակառակ ուղղությամբ: Երբ աշմանը  
գետի ջրերը սառչում էին, փակում էին այդ անցքը, որպեսզի ձկները մնային ավաղի ներ-  
սում, հանում էին քարերը և դուլլերով օջախից դուրս բերում ձկներին: Միանգամից հա-  
նում էին 1—2 դուլլ ձուկ (ԴԱՆ, տեսր 1, Սևան):

<sup>35</sup> ԴԱՆ, տեսր 2, Կամո:

<sup>36</sup> Այս որսաձևի մասին որոշ նյութեր կան Հայաստանի արևիկներում, որոնց վկա-  
յությամբ Ն. Գետաշեն գյուղի ամեն մի հինգերորդ ջրաղացի շուրջը կառուցված են եղև  
168

թրում, այնպես էլ բանավոր խոսքում հիմնականում հասկացվել է սուկ ուռենու ճյուղերից գործած գործիք, որի պատճառով էլ դրա իմաստը նեղացվել է: Մինչդեռ, ջրաղացի թարփի մասին հստակ նկարագրություն կա դեռևս Տիգրան Հոսեանցի եկեղեցու: Մի արձանագրության մեջ, ուր ստվում է. «Պահեզն գոր գնել էի եւ շինել Գլնա դռանն, կես ակն ջաղաց, թարփ մի բոլոր ու մին այլ թարփին (շաբաթ): Բ: Կիր, Գլինորին ջաղաց: աս: թարփն շաբաթ: Բ արի Բ Բեշբենակապէս ինչուրփի կարմունջն գետին կեսն իմ գնած է...»<sup>37</sup>:

Այս վկայությունն անկասկած վերաբերում է միայն ջրաղացի թարփին և ոչ թե ուռենու ճյուղերից հյուսած թարփին: Այդ թարփերի հիշատակումը ջրաղացի հետ մեկտեղ մատնացույց է անում, որ խոսքը ջրաղացի թարփի մասին է, հակառակ պարագայում դա անիմաստ կլիներ:

Ջրաղացի թարփի մի եզակի նմուշ կիսաքանդ վիճակում պահպանվել է Մարտունու շրջանի Ն. Գետաշեն գյուղում, Ագրիճա գետի առափնյա հատվածներից մեկում: Երկու ջրաղացների ու դինգի հետ մեկտեղ, որոնք այսօր ևս գործում են, այն կառուցել է Ալաշկերտից ներգաղթած Թարոն 1830-ական թթ.: Այդ շաղչի թարփը գործել է մինչև 1940-ական թթ. վերջերը:

Ջրաղացը ջրով ապահովելու նպատակով արագահոս գետի որևէ հարմար տեղում, դեպի ակն անկյունագծով, կառուցում էին քարե պատնեշ, որի ակից սկսվող ծայրից մի քիչ վերև, թեք լանջի մեջ, փորում էին ոչ մեծ չափի առու՝ ջրի հոսքին տալով նկատելի ուժգնություն: Նայած տեղանքին առում գետից բարձր էր լինում 9—16 մ., երկարությունը՝ 200—500 մ.: Առվից ներքև ջրաղացն էր, որի ճնշման խողովակից՝ նավից ջուրն ուժգնորեն թափվում էր ջրաղացի փառերի վրա ու պտտեցնում քարերը:

Ասվեց, որ ձկնադրության ժամանակ ձուկը լողում է դեպի այն վայրերը, որտեղ ինքն է «ծնվել», ձկնադրում էր և վերադառնում լիճ: Ազգագրական նյութերի վկայությամբ ձուկը ձկնարերևուց հետո այնքան է հյուծվում ու թուլանում, որ լիճ վերադառնալիս ոչ թե լողում է, այլ ջուրը թշուր է նրան, որին տալիս են գլորվող ձուկ անունը: Հասնելով պատնեշին, ձուկն ընկնում է առվի ջրի մեջ, և թշվում դեպի ջրաղացի նավերը: Գիշերը բացում էին թարփի առջև դրված վահանակը, փակում նավ գնացող ջրի հոսքը և առում շուր տալիս դեպի թարփը: Առավոտյան փակում էին այն և աշխատեցնում ջրաղացը: Միանգամից թարփից հանում էին 1—1,5 տոննա կողակ (իշխան հուզվադեպ էր լինում): Ջրաղացը հիմնականում աշխատեցնում էին ցերեկը, իսկ թարփը՝ գիշերը: Ջրաղացի աշխատած ժամանակ ձկների մի մասը նորից անցնում էր գետը, իսկ մյուս մասը մնում ջրտանը: Երբ ջրաղացը կանգնեցնում էին, իջնում էին ներքև և հանում մնացած ձկները:

Ջաղչի թարփը կառուցում էին առվից երկու մետր ներքև, ջրաղացից ոչ հեռու: Առվում, թարփի ուղղությամբ, ջրի հոսանքի համար արվում էր քառակյուն կտրվածք, բոլոր փակում էին տախտակե վահանակով: Թարփի հատակը 2—3 մ. ցածր էր լինում առվի հատակից: Այդ կառույցը բարից պատրաստված, անսլաղ, կիսակլոր ավազան էր, որի հիմքն ուներ 0,5 մ. լայնք, որպեսզի դիմանար ջրի հոսքին: Թարփի մակերեսը 3—4 քառ. մ. էր, որի հատակին, մեկ քառակուսի մետր ծավալով, իսկ երբեմն ավելի փոքր, կտրվածք էր թողնվում: Դրա վրա երկաթե ճաղեր էին օգտում<sup>38</sup>, որից ջրի հետ մեկտեղ անցնում էին նաև փոքր ձկները, իսկ մեծերը մնում էին թարփում: Ջուրը թարփից անընդհատ պետք է հոսեր, որ ներսում այն չհոսեր: Ջկնորսության այս եղանակը բավական արդյունավետ էր և մեծ ջանքեր չէր պահանջում:

քարե ծուղակ ավազան (տե՛ս ՊՊԿԱ, ֆ. 190, ց. 1, գ. 128, թ. 29): Որսանը ոչ միայն բավական արտադրողական էր, այլև նպաստում էր ձկների աճին ու բազմացմանը, քանի որ դրանով ձկնորսություն էին անում ձկների ձկնադրումից հետո (նույն տեղում): Սակայն արխիվային նյութերի վկայություններն ամբողջական չեն, բացակայում է որսանի մանրամասն նկարագրությունը: Դա մասամբ լրացվում է Վ. Պետրովի ուսումնասիրության շք-նորհիվ (տե՛ս В. Петров, Աշլ. աշխ., էջ 9—10): Այս որսանի հետ կապված բազմաթիվ մանրամասներ հնարավոր եղավ վերականգնել Մարտունու շրջանի Ներքին Գետաշեն գյուղում կատարած ազգագրական արշավախմբային հետազոտությունների ժամանակ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սևանի ավազանի բնակչության բանավոր խոսքում պահպանվել է ջաղչի թարփ և ոչ թե քարե ծուղակ անվանումը, ուստի անհրաժեշտ է ջրաղացության մեջ դնել ջաղչի թարփ տերմինը:

<sup>37</sup> Դիվան հայ վիմագրության, Աճի քաղաք, կապեց Հ. Ա. Օրբելի, Երևան, 1966, արձ. 23, էջ 63:

<sup>38</sup> Երկաթե ճաղերը պետք է ունենային որոշ հետավորություն, որպեսզի փոքր ձկները կարողանային դրանցով անարգել անցնել դեպի գետը: Այս տեսակետից ևս թարփով ձրկնորսությունը համարվել է ձկների աճին ու բազմացմանը նպաստող բրսան, որի ժամանակ



Ջրաղացի մեկ թարփով Ագրիճա գետից օրական որսում էին մոտ 200 փութ ձուկ: 1920-ական թթ. վերջերին, մեկ սեզոնի ընթացքում, վեց թարփով որսացել են 2—7 հազար փութ ձուկ (գետի վրա գործող 15 ջրաղացներից միայն վեցն ուներ թարփ): Ուստի պատահական չէ, որ այս որսաձևը վերցվել էր պետական հսկողության տակ: Անկասկած է, որ թարփերի կիրառությունը պայմանավորված է եղել գետերում ձկների նկատելի առատությամբ: Զնայած այսօր Հայաստանի ջրերում ձկների առատություն չկա, այդուհանդերձ, ջաղչի թարփը մեր օրերում ևս արժանի է ուշադրության: Վերջին շրջանում նախատեսվում է նորից գործարկել արագահոս որոշ գետերի վրա եղած հին էլեկտրակայանները, որը պայմանավորված է հանրապետության տնտեսության արդի ծանր վիճակով: Այս դեպքում կարող է կյանքի կոչվել ինչպես ջաղչի թարփը, այնպես էլ ցանցից պատրաստած տարբեր տիպի թարփերը:

**ձեռաց թոռ**— Ինչպես պատրաստման, այնպես էլ օգտագործման սկզբունքներով ձկնորսական այս եղանակը հիմնականում կրել է համահայկական բնույթ: Տարբերություններն առանձին ազգագրական շրջաններում ավելի շատ վերաբերել են թոռի պատրաստման հնարքներին, օգտագործվող հումքին, չափերին և գցելու հնարամտություններին<sup>39</sup>. Գրավոր և դաշտային նյութերը վկայում են, որ ձեռաց թոռը գործել են տնայնագործական եղանակներով՝ յուրաքանչյուր ձկնորս իր կարիքների համար: Թերևս բացառություն է կազմում Նոր Բայազետ քաղաքը, որի արհեստավորները ձեռնաթոռեր էին պատրաստում ինչպես տեղում, այնպես էլ ավազանի մյուս ձկնորսական բնակավայրերում՝ վաճառելու նպատակներով: Եվ պատահական չէ, որ ձեռաց թոռով ձկնորսությունը հատկապես լայն կիրառություն ուներ Նոր Բայազետի հայերի մեջ, որոնք ձուկ էին որսում Գավառագետում: Ինչպես մյուս ազգագրական շրջաններում, այնպես էլ Գեղարքունիքում, ձեռաց թոռ գործելու համար հումք է ծառայել բամբակը, որը բերվում էր Արարատյան հովտից: Այս մշակույթի զարգացած լինելու շնորհիվ, ձկնորսական հիմնական վայրերը, պարբերաբար, ապահովվել են բամբակի հումքով: Ուստի, հայ իրականության մեջ, ձեռքի թոռի պատրաստման գործում վուշից ստացված տարբեր տեսակի թելերի օգտագործումը անձնաձև տեղ է գրավել<sup>40</sup>: Մեկ ձեռաց թոռի համար պահանջվող բամբակի թելի, շրիդի և արհիճների (**«զոյլի»**) համար կատարած ամբողջ ծախսը կազմում էր մինչև հինգ ռուբլի<sup>41</sup>:

Ձեռաց թոռը գործում էին մքոք գործիչով և փայտե թոռով: Նախ, բամբակը մաքրում էին, իլիկով մաճում և ստանում անհրաժեշտ հաստության թել: Այնուհետև, պատրաստի թելը ութաձև փաթաթում էին մքոքի վրա, որը կարծես կատարում էր կարի մեքենայի կլեկո կոճի դերը: Գործած ցանցի օղակների մեծությունը պայմանավորված էր փայտի թրի չափերով: Ծանց գործելու նպատակով թելի մի ծայրը օղակ էին անում և կապում որևէ ամրությունից, այնուհետև, նայած պահանջվող ցանցի օղակների չափերին, թրի վրա անում էին առաջին օղակը, որին տալիս էին **առաջին տուն անունը**: Դրանից հետո թելը խաք կտայից, կրկնելով նույն գործողությունը: Այդ սկզբունքով նախ գործում էին 12 աչք-տուն, որից հետո այն կրկնապատկում էին, երրորդ անգամ այն մի անգամ էլ էին ամրոցելով կրկնում, որի հետևանքով աչք-տները դառնում էին 48 հատ: Ծանցն ունենում էր 2 մ. երկարություն, տակի լայնքը՝ 3—4 մ., իսկ բերանինը՝ 20—30 սմ.: Թոռի բերանի վերջին շարքի գործվածքը **ջուլատ էին անում**, որ այդ հատվածը կապվող շրիդի համար հաստ ու ամուր լիներ: Երբ ցանցն արդեն գործած պատրաստ էր, դրա բերանի շուրջը հինգ աչք-տունը

ոչնչացվում էր ձվադրող ձկների միայն երեք տոկոսը (տե՛ս ՊՊԿԱ, ֆ. 130, ց. 1, գ. 128, թ. 19, 50, հմտ. հմտ. ԴԱՆ, տետր 3, Մարտունի, Բ. Պետրոս, ճշվ. աշխ., էջ 9—10):

<sup>39</sup> Ազգագրական նյութերի վկայությամբ, **ձեռաց թոռը թաղողի վրա յա, մարդ կա գունդ կթալա գետի մեջ, մարդ կա՝ կպարգա** (ԴԱՆ, տետր 3, Մարտունի): Անջուշտ, այս որսաձևի կարևոր առանձնահատկություններից մեկն այն է, որ թոռը գցելիս, ինչքան հնարավոր է, պետք է գցել բացված վիճակով, որպեսզի այն զբաղեցնի առավել մեծ մակերես: Օրվա շոգ եղանակին ձուկը մտնում է խոր փոսերի մեջ, քանի որ այնտեղ սառն է լինում, իսկ երբ արևը սկսում է մայր մտնել, ձուկն արտո է անում, դուրս է գալիս խաղալու ջրի բարակ հատվածներում: Ուստի թոռով ձկնորսություն անելու ամենից հարմար ժամանակը ամռան լուսնյակ գիշերներն են, երբ ձուկը դուրս է գալիս ջրի երես այնպես, որ **մեջքի թևերը ջրից դուրս են մնում**: Առավել դժվար է ձեռքի թոռով կարմրախայտի որսը: Պետք է արևը ջրի վրայից անցնի, հով լինի, նոր թոռ գցել, հակառակ պարագայում կարմրախայտին որսակն անհնարին կլինի (ԴԱՆ, տետրեր 1—4):

<sup>40</sup> Գեղարքունիքում վուշից թոռ պատրաստելու նպատակով, վուշի ցողունը փոսում էին արևի տակ, չորացնում, **փայտով լավ տփում**, որից հետո սանդեղերով զգելով և իլիկով մաքնելով, ստանում էին ամուր թել, որին **վիժ թել** անուն են տալիս (տե՛ս նույն տեղում):

<sup>41</sup> Տե՛ս Պ. Կյաչմա, ճշվ. աշխ., էջ 113:

մեկ ծալում էին, ետ գալիս և թելով կապում: Ամբողջ թոռն այդ եղանակով կապում էին. որի շնորհիվ ցանցի ներքևի մասում առաջանում էին տոպրակներ<sup>42</sup>, որոնց տալիս են խս-  
զինե ամուսնը: Թողը գցելիս, երբ ձկները լցվում էին խազինե-տոպրակների մեջ, այլևս դուրս  
գալ չէին կարողանում: Եվ որպեսզի թոռն ընկղմվեր գետի ջրում ու այն հանելուց սահուն  
դուրս բաշվեր, թոռի բերանի հաստ շրիհի շուրջը կապում էին արճիճ-գյուլլաներ: Մեկ թո-  
ռի համար պահանջվում էր 120—140 արճիճ<sup>43</sup>, որոնք լինում էին թագրեհի կենտրոնում  
անշարժ մնացող կլոր հատիկի մեծությամբ: Դրանցից յուրաքանչյուրն ունենում էր մոտ  
50 գրամ ծանրություն, իսկ ողջ թոռի կշիռը հասնում էր 8 կգ.<sup>44</sup>:

Փորձված ձկնորսները ձեռաց թողը գցում էին գետի այն հատվածը, որտեղ ձուկը խս-  
զացել էր՝ ավաղի վրա թողնելով նկատելի հետքեր<sup>45</sup>: Թողը գցելը պահանջում է որոշակի  
հմտություն ու ճարպկություն: Որպեսզի այն իր ռոջ մակերեսով փովեր ջրում և խազինե-  
տոպրակները բացվեին, նախ ընտրում էին հարթ մակերես այն հաշվով, որ թողը տեղա-  
փովեր տվյալ հատվածում: Այնուհետև թոռի բերանի շրիհը կապում էին ձեռքի դաստակից,  
որի շնորհիվ թոռից կապված արճիճները կախվում էին ներքև, որից հետո դրանից մեկը  
դնում էին բերանը, թողը կիսով չափ հավաքում մյուս ձեռքի մեջ և մոտենալով գետի ափի  
հարմար հատվածին՝ միաժամանակ ջուրն էին գցում թոռն ու արճիճը<sup>46</sup>: Թողը բացված  
վիճակում բռնում է շուրջ 3 քառ. մ. մակերես, ջրում թողնում ջրի 3—4 րոպե, որից հետո  
այն դուրս են բաշում ջրի ափը, ձեռքով հանում խազինեթում մտած ձկները, կարգի բե-  
րում գործիքը և նորից նետում ջուրը: Ձկների առատության շնորհիվ Գեղարքունիքի գե-  
տերում ձեռաց թողով երկու ժամվա ընթացքում որսացել են 3—4 փութ ձուկ, յուրաքան-  
չյուրը 1—2 կգ. քաշով<sup>47</sup>:

Ձեռաց թողը բավական երկար կիրառվեց Հայաստանի գետային ձկնորսության մեջ:  
Եվ պատահական չէ, որ մեր օրերում ևս տարբեր վայրերում կարելի է հաճախակի հան-  
դիպել ձեռնաթողների, որոնք սակայն օգտագործումից դուրս են եկել:

**Թարփի սալա**— Այն պատրաստելու համար ուռենու ոչ այնքան հաստ ճյուղերը հա-  
մարյա իրար կպած փոռում են հարթ գետնի վրա, որպեսզի դրանց միջև թողնված անց-  
քերից ձկները չկարողանան անցնել: Այնուհետև փափուկ մետաղալարով այդ ճյուղերն իրար  
են գործում: Սալան տանում էին Բասխա գետի ափը, փնտրում ջրի անկման համար հար-  
մար տեղ, որին շալան են ասում: Նախ փոխում էին ջրի հոսքի ուղղությունը, մի քիչ փո-  
սեցնում գետի հատակը, հարթեցնում, և դրա վրա գցում գերանատիպ 3—4 ոչ հաստ փայ-  
տեր: Ջրի անկման վայրերում քարեր էին շարում, փոքրացնում գետի հունը, որպեսզի ուժեղ  
լիներ ջրի անկումը: Որպեսզի թարփն ամուր մնար իր տեղում, տակի փայտերը հուսալի  
կերպով կապում էին գետի մեջ եղած քարերից: Գործած սալան փոռում էին այդ փայտերի  
վրա, որի շնորհիվ սալան դիմանում էր ջրի ուժեղ հոսքին: Թարփի սալան դրվում էր գետի  
հունից մի քիչ ցածր, որպեսզի ջրի հետ դեպի այդ սարքն ընկած ձուկը չկարողանար դուրս  
գալ: Թարփի սալայի երեք կողմերից մոտավորապես 40 սմ. բարձրությամբ պատ էին շա-  
րում, որը պետք է նստեր սալայի վրա մոտ 50 սմ.-ով: Երբ կառույցը պատրաստ էր, գետի

<sup>42</sup> Հայտնի է, որ լճային ձկնորսության մեջ կիրառված մեծ ցանցերում նույնպես օգ-  
տագործվում է խազինե, որտեղ լցվում են ձկները: Ձեռքի թոռում եղած խազինե-տոպրակ-  
ները կատարում էին այդ նույն դերը:

<sup>43</sup> Թոռի բերանի շուրջը, յուրաքանչյուր 15—20 սմ. մեկ, կապվում էր մեկ արճիճ: Այն-  
տեղ, որտեղ արճիճն ամրացնում էին պարանից, առաջանում էր խազինե-տոպրակը:

<sup>44</sup> ԴԱՆ, տետրեր 1—4:

<sup>45</sup> Դաշտային նյութերի վկայությամբ, եթե գետում եղած ավաղը մաքուր է, ուրեմն  
տվյալ տեղում անպայման ձուկ կա, բրովհետև ձուկը մաքրում է այն: Գեղարքունիքում  
ձկների ծվարի տեղն իմանում էին նաև ձկների արտաշնչած գոլորշուց առաջացած ջրի  
պղպաջակներից, ինչպես նաև տվյալ տեղում ձկնկույների առկայությունից, որոնք ձկների  
ավաղներից անպակաս են լինում (ԴԱՆ, տետրեր, 3—4):

<sup>46</sup> Տե՛ս ՊՊԿԱ, ց. 1, գ. 1732, մ. 1, թ. 53: Ազգագրական նյութերի վկայությամբ դա  
պարտադիր էր և հաջող որսի կարևոր պայմաններից մեկը: Երբ արճիճը բերանն էին դը-  
նում և թողը կիսով չափ հավաքում մյուս ձեռքում, այն ամբողջովին բացվելու հնարավո-  
րություն էր ստանում: Սակայն խիստ կարևոր է, որ արճիճն ու թողը միաժամանակ նետ-  
վեն ջուրը, որի դեպքում թոռն ամբողջովին բացվում է: Այդ հանգամանքն ընդգծելու հա-  
մար ասում էին, թե ձեռաց թողով ձկնորսություն անելիս պարտադիր է, որ թոռն ու գլու-  
կն միաժամանակ ցփենն մըջ ջրին (տե՛ս ԴԱՆ, տետրեր 1—4): Երբեմն բերանն էին  
դնում ոչ թե արճիճը, այլ թոռի ճոթը (ԴԱՆ, տետր 6, Լափան):

<sup>47</sup> Առատ որսի դեպքում թոռից միանգամից հանում էին 40—50 կգ. ձուկ (տե՛ս ԴԱՆ,  
տետրեր 1—4):

կտրված հունը ուղղվում էր դեպի թարփի սալան: Ձուկը ջրի հոսքով, պատերի հետ «խաղալով» ընկնում էր այդ սարքի վրա: Թարփի սալան պատրաստում էին մայիս-հուլիս ամիսներին, երբ գետի վարարումներն ավարտված են լինում: Թարփի սալայով հնարավոր է ձուկ որսալ այս ամիսներին, որից հետո գետի վարարումների ժամանակ այս եղանակով ձկան որսն անհնարին էր: Թարփի սալայով ձուկ են որսացել Քասախում 1920—1940-ական թթ., որից հետո այն կիրառությունից դուրս է եկել<sup>46</sup>: Ձկնորսական ուշագրավ այս եղանակը գրավոր աղբյուրներում չի հանդիպում, այն հավանաբար ուշ շրջանի մտահղացում պետք է համարել, որն այսօր հիշում են միայն տարեց մարդիկ:

**Պարանով (թոկով) ձկնորսություն**— Այն բնորոշ է եղել Իջևանի շրջանին և համարվում է կարթով ավանդական որսաձևի ավելի կատարելագործված եղանակը, որը կիրառվել է Աղստև գետում մինչև 1950-ական թթ.<sup>49</sup>: Պարանի մի ծայրին կապում էին փոքր քար, մյուս ծայրին՝ մեծ, իսկ մեջտեղում շարում էին կարթի մի քանի կեռիկներ: Պարանի այն ծայրը, որին կապված էր մեծ քարը, դնում էին գետի մի ափին, իսկ երկրորդ ծայրը գցում էին գետի մյուս ափը: Դրանով պարանը գետի մի ափից ձգվում էր մյուսը, և կարթը կեռիկների հետ իջնում էր գետի մեջ: Պարանը գետի մեջ էին գցում երեկոյան և հանում առավոտյան:

Դաշտային նյութերի վկայությամբ Հայաստանում բավական լայն տարածում են ունեցել նաև ձկան որսի բազմաթիվ պարզունակ միջոցներ՝ ձեռքով, պարկով, բաճով, կարթով, կողոզով, ծանր մուրճով և այլն, որոնք առավելապես ունեցել են մարզա-ժամանցային բովանդակություն:

Ծավոք, սրանց հետ զուգահեռ տարածում են գտել նաև որսի բարբարոսական եղանակները, որոնք ոչնչացրել են ջրի ողջ կենդանական աշխարհը: Դրանք կիրառվել են բոլոր բնակավայրերում, որն անհրաժեշտ հսկողության բացակայության հետևանք պետք է համարել:

Այսպիսով, գետային ձկնորսության վերոհիշյալ եղանակների ուսումնասիրությունը թույլ է տալիս անելու մի շարք եզրակացություններ.

1. 19—20-րդ դդ. Հայաստանի գետային ձկնորսության մեջ կիրառված եղանակների մի մասն ունեցել է ընդգծված տեղային բնույթ, հիմնականում ամփոփվելով այս կամ այն բնակավայրի ահմամներում: Օրինակ, ջրաղացի թարփով ձկնորսությունը բնորոշ է եղել միայն Ազրիճա գետի մի հատվածին, որն անցնում է Ն. Գետաշեն գյուղի տարածքով, ինչպես նաև Ախուրյան գետին, գոյաղով ձկնորսությունը՝ Գալպտագետի՝ Նորաղով գյուղով անցնող հատվածին, թարփի սալայով և ծանր մուրճով ձկնորսությունը՝ Քասախ գետի վրա, պարանով ձկնորսությունը՝ Աղստև գետի վրա: Հայաստանի այլ գետերում և բնակավայրերում դրանք կիրառություն չեն ունեցել: Մինչդեռ գետային ձկնորսության մյուս եղանակներն ունեցել են համահայկական ճանաչում ու ընդգրկում:

2. Խշտով ու խշտարով, գետի կեռիկով ու բաճով արվող ձկնորսությունը չնայած լայն տարածում է ունեցել և եղել բավական արդյունավետ, սակայն այս գործիքներով որսած ձկների 40—50 տոկոսը վնասվում էր և վաճառքի կամ արտահանման համար դատնում ոչ պիտանի:

3. Հայաստանի գետային ձկնորսական եղանակների ուսումնասիրությունը թույլ է տալիս լրտաբանել տվյալ բնագավառում ունեցած մշակութային հմտությունները, որոնք գալով դարերի խորքից և փոխանցվելով սերնդից սերունդ՝ հասել են մինչև մեր օրերը:

**А. С. ПЕТРОСЯН — Народные способы речного рыболовства в Армении.**— Рыболовный промысел — составная часть культуры, потому заметный интерес представляют этнографические исследования народных методов и приемов речного рыболовства в Армении, большинство которых ныне предано забвению. Представление о них стало возможным составить благодаря сбору полевых материалов. Установлено, что наиболее типичными приемами рыболовства здесь были: ловля копьём, трезубцем, речным крючком, рыболовной вершей, ручной сетью, вершей корзинной, в перекрытом рукаве реки, с использованием авлага, голы, мельничной верши, веревки. Рыбу ловили также руками, мешком, лопатой, удочкой, плоским ситом. В статье освещаются технологические, социальные и типологические аспекты этого промысла в Армении.

<sup>46</sup> ԴԱՆ, տետր 5, Աշտարակ:

<sup>49</sup> ԴԱՆ, տետր 7, Իջևան: